

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի թիվ ՀՕ-176-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություններ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**ռադիոհաձախականություն՝** էլեկտրամագնիսական տատանումների հաձախականություն, որը սահմանվում է ռադիոհաձախականության սպեկտրի միավոր բաղադրիչը նշելու համար.

ռադիոհաձախականությունների սպեկտր՝ Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից հաստատված ռադիոհաձախականությունների տիրույթների համախումբ, որոնք կարող են օգտագործվել ռադիոէլեկտրոնային միջոցների կամ բարձր հաձախականության սարքերի գործունեության համար.

ռադիոհաձախականությունների տիրույթ՝ հաձախականությունների միջակայք, որը սահմանափակված է ստորին եւ վերին եզրային հաձախականություններով.

ռադիոհաձախականությունների տիրույթի որոշակի հատված՝ ռադիոհաձախականությունների տիրույթից օգտագործման որոշակի նպատակների համար առանձնացված ստորին եւ վերին եզրային հաձախականություններով սահմանափակված հաձախականությունների միջակայք.

կառավարական նշանակության ռադիոհաձախականությունների սպեկտր՝ ռադիոհաձախականությունների եւ ռադիոհաձախականությունների տիրույթների համախումբ, որոնք նախատեսված են միայն պետական (կառավարական) մարմինների, այդ թվում՝ կառավարական կապի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության, պետական անվտանգության եւ հասարակական կարգի պահպանման կարիքների համար.»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը լրացնել գ) ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝

«գ) Պետական (կառավարական) մարմինների, այդ թվում՝ կառավարական կապի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության, պետական անվտանգության եւ հասարակական կարգի պահպանման կարիքների համար իրականացնել կառավարական նշանակության ռադիոհաձախականությունների սպեկտրի կառավարում: Կառավարական նշանակության ռադիոհաձախականությունների սպեկտրից ռադիոհաձախականությունների տիրույթների օգտագործման իրավասություն ունեցող սուբյեկտների ցանկը եւ կառավարական նշանակության ռադիոհաձախականությունների սպեկտրից ռադիոհաձախականությունների տիրույթների հատկացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածից բխող իրավական ակտը Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է ընդունի սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Տեղեկանք փոփոխվող հոդվածների մասին

Առաջին ընթերցում
Լրամշակված տարբերակ
Երկրորդ ընթերցում
Կ-803-10.12.2020-SՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2005 թվականի հուլիսի 8-ի թիվ ՀՕ-176-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություններ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**ռադիոհաձախականություն՝** էլեկտրամագնիսական տատանումների հաձախականություն, որը սահմանվում է ռադիոհաձախականության սպեկտրի միավոր բաղադրիչը նշելու համար.

ռադիոհաձախականությունների սպեկտր՝ Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից հաստատված ռադիոհաձախականությունների տիրույթների համախումբ, որոնք կարող են օգտագործվել ռադիոէլեկտրոնային միջոցների կամ բարձր հաձախականության սարքերի գործունեության համար.

ռադիոհաձախականությունների տիրույթ՝ հաձախականությունների միջակայք, որը սահմանափակված է ստորին եւ վերին եզրային հաձախականություններով.

ռադիոհաձախականությունների տիրույթի որոշակի հատված՝ ռադիոհաձախականությունների տիրույթից օգտագործման որոշակի նպատակների համար առանձնացված ստորին եւ վերին եզրային հաձախականություններով սահմանափակված հաձախականությունների միջակայք.

կառավարական նշանակության ռադիոհաձախականությունների սպեկտր՝ ռադիոհաձախականությունների եւ ռադիոհաձախականությունների տիրույթների համախումբ, որոնք նախատեսված են միայն պետական (կառավարական) մարմինների, այդ թվում՝ կառավարական կապի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության, պետական անվտանգության եւ հասարակական կարգի պահպանման կարիքների համար.»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը լրացնել գ) ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝

«գ) Պետական (կառավարական) մարմինների, այդ թվում՝ կառավարական կապի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության, պետական անվտանգության եւ հասարակական կարգի պահպանման կարիքների համար իրականացնել կառավարական նշանակության ռադիոհաձախականությունների սպեկտրի կառավարում: Կառավարական նշանակության ռադիոհաձախականությունների սպեկտրից ռադիոհաձախականությունների տիրույթների օգտագործման իրավասություն ունեցող սուբյեկտների ցանկը եւ կառավարական նշանակության ռադիոհաձախականությունների սպեկտրից ռադիոհաձախականությունների տիրույթների հատկացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»

Հոդված 3. Եզրափակիչ մասի անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածից բխող իրավական ակտը ~~ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվում~~ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է ընդունի սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (4-803-10.12.2020-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երև ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր Հոդված 1.	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ նախագծի վերնագրում, ինչպես նաև 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել:	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 2.	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր 13-17-րդ պարբերություններում՝ «Ռադիոհաձախականություն», «Ռադիոհաձախականությունների սպեկտր», «Ռադիոհաձախականությունների	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

			տիրույթ», «Ռադիոհաճախականությունների տիրույթի որոշակի հատված», «Կառավարական նշանակության ռադիոհաճախականությունների սպեկտր» հասկացությունները նշել մգեցված ՝ ապահովելով լրացվող դրույթների ձեւի համապատասխանությունը Օրենքի 2-րդ հոդվածի ձեւին (տեսքին):		
3.	ՀՀ կառավարություն	Հոդված 3.	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջները՝ Նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրը հանել:	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	Հոդված 3 2-րդ մաս	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «ՀՀ» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով, իսկ «կառավարության հաստատմանն է ներկայացվում» բառերը փոխարինել «կառավարությունը պետք է ընդունի» բառերով:	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է